ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԿԳՄՆՄԱՊՁԲ-21/26

ք. Երևան «07» Դեկտեմբեր 2021թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վ. Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ) մի կողմից, և «Զանգակ -97» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ս. Մկրտչյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողը էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդն պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողը իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 297395680 (երկու հարյուր իննսունյոթ միլիոն երեք հարյուր իննսունհինգ հազար վեց հարյուր ութսուն) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն Գնորդի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1 և N 2 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ԳՆՈՐԴ**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Ք. Երևան, Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 9000110005130
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղարի տեղակալ

---------- Վ. Գասպարյան
/ստորագրություն/ Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Զանգակ-97» ՍՊԸ
ք. Երևան, Կոմիտասի պող 49/2
«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան»
Հ/Հ 217001040013001
ՀՎՀՀ 00830786

Տնօրեն

---------- Զ. Սպիտչյան
(ստորագրություն) Կ.Տ.

*Հավելված N 1*
*«07» 05 2021թ. կնքված*
*ՀՀԿԳՄՍՆՄԱՊՁԲ-21/26 ծածկագրով պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Չափաբաժին | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ Դասակարգման (CPV) | Ապրանքի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Անվանումը, ապրանքային նշանը | Տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | քանակը | միավորի գինը, ՀՀ դրամ | ընդամենը գինը, ՀՀ դրամ | Մատակարարման ժամկետը |
| 1 | 22111110-106 | Դասագիրք-1 | Գնման առարկա է հանդիսանում<br>«Մաթեմատիկա 1» դասագիրքը, 1-ին մաս, 1-ին դաս. դասագիրք-տետր,հեղ.՝ Ս. Մկրտչյան<br>Բովանդակային չափանիշներ<br>1-ին դասարանի 1-ին կիսամյակի համար նախատեսված դասագիրք-տետր: Դասագիրք-տետրում հասկացությունները հստակ ձևակերպված են: Դասագիրք-տետրը բաղկացած է նախաթվային բաժնից, որում ուսումնասիրվում են այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են գույնը, ձևը, չափը, նյութը, և 1-ից 10 թվերին վերաբերող բաժնից: Այն է՝ թեմաների և դասերի, առկա է բովանդակության ցանկ: Նյութի ծավալը համապատասխանում է հատկացված ժամաքանակին: Առաջադրանքները ներկայացված են պարզից բարդ սկզբունքով: Բովանդակության բարդության աստիճանը համապատասխանում է սովորողների տարիքային առանձնահատկություններին: Պատկերազարդումները համադրված են տեքստին:<br>Տեխնիկական չափանիշներ<br>Էջերի քանակը՝ 96<br>Չափսը՝ 20X28 սմ<br>Գույնը՝ 4X4<br>Թուղթը՝ օֆսեթ 70 գ/մ²<br>Կազմը՝ ֆութբորդ 270 գ/մ²<br>Կարելու ձևը՝ թելակար<br>Սոսնձելու ձևը՝ թերմոսոսինձ | հատ | 38482 | 1360 | 52335520 | Մինչև ս/թ օգոստոսի 20-ը |
| 2 | 22111110-43 | Դասագիրք-2 | Գնման առարկա է հանդիսանում<br>«Մաթեմատիկա 1», 2-րդ մաս 1-ին դասարանի դասագիրքը, հեղ.՝ Ս. Մկրտչյան<br>Բովանդակային չափանիշներ<br>Դասագիրքը նախատեսված է հանրակրթական դպրոցի առաջին դասարանի երկրորդ կիսամյակի համար: Համապատասխանում է մաթեմատիկայի առարկայական չափորոշչին ու ծրագրին և ընդգրկում է առաջին դասարանի երկրորդ կիսամյակի համար նախատեսված ծրագրային նյութը: Շարունակությունն է առաջին դասարանի առաջին կիսամյակի համար նախատեսված դասագիրք–տետրի և հիմք է նախապատրաստում տարրական մյուս դասարանների մաթեմատիկայի լիարժեք ուսուցման համար:<br>Տեխնիկական չափանիշներ<br>Էջերի քանակը՝ 96<br>Չափսը՝ 17X24 սմ<br>Գույնը՝ 4X4 | հատ | 24888 | 1265 | 31483320 | Մինչև ս/թ օգոստոսի 20-ը |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Թուղթը՝ օֆսեթ 70 գ/մ²<br>Կազմը՝ ֆութբորդ 270 գ/մ²<br>Կարելու ձևը՝ թելակար<br>Սոսնձելու ձևը՝ թերմոսոսինձ | | | | | |
| 3 | 22111110-44 | Դասագիրք-3 | Գնման առարկա է հանդիսանում<br>«Կերպարվեստ 1» դասագիրքը, 1-ին դասարանի աշխատանքային տետր, հեղ.՝ Լեմս Ներսիսյան, Ելենա Գյուլմիսարյան<br>Բովանդակային չափանիշներ<br>Աշխատանքային տետրը նախատեսված է հանրակրթական դպրոցի առաջին դասարանի համար: Այն պետք է համապատասխանի «Կերպարվեստ» առարկայի առարկայական չափորոշչին ու ծրագրին և ընդգրկի առաջին դասարանի համար նախատեսված ծրագրային նյութը: Պետք է հիմք նախապատրաստի տարրական դպրոցի մյուս դասարանների առարկայի լիարժեք ուսուցման համար:<br>Տեխնիկական չափանիշներ<br>Էջերի քանակը՝ 32<br>Չափսը՝ 29X20 սմ<br>Գույնը՝ 4X4<br>Թուղթը՝ օֆսեթ 100 գ/մ²<br>Կազմը՝ օֆսեթ 100 գ/մ²<br>Կարելու ձևը՝ մետաղական | հատ | 40192 | 820 | 32957440 | Մինչև ս/թ օգոստոսի 20-ը |
| 4 | 22111110-48 | Դասագիրք-4 | Գնման առարկա է հանդիսանում<br>«Երաժշտություն 2» դասագիրքը, 2-րդ դասարանի դասագիրք, հեղ.՝ Ցուրի Յուզբաշյան,<br>Ալինա Փահլևանյան<br>Բովանդակային չափանիշներ<br>Դասագիրք հանրակրթական դպրոցի երկրորդ դասարանի համար:<br>Համապատասխանում է «Երաժշտություն» առարկայի առարկայական չափորոշչին ու ծրագրին և ընդգրկում է երկրորդ դասարանի<br>համար նախատեսված ծրագրային նյութը: Շարունակությունն է երրորդ դասարանի «Երաժշտություն» դասագրքի և հիմք է նախապատրաստում երրորդ դասարանի «Երաժշտություն» առարկայի լիարժեք ուսուցման համար:<br>Տեխնիկական չափանիշներ<br>Էջերի քանակը՝ 96<br>Չափսը՝ 17X24 սմ<br>Գույնը՝ 4X4<br>Թուղթը՝ օֆսեթ 70 գ/մ²<br>Կազմը՝ 270 գ/մ²<br>Կարելու ձևը՝ թելակար<br>Սոսնձելու ձևը՝ թերմոսոսինձ | հատ | 34253 | 1450 | 49666850 | Մինչև ս/թ օգոստոսի 20-ը |
| 5 | 22111110-57 | Դասագիրք-5 | Գնման առարկա է հանդիսանում<br>«Մաթեմատիկա 3» դասագիրքը, I մաս 3-րդ դասարանի դասագիրք, հեղ.՝ Ս. Մկրտչյան Բովանդակային չափանիշներ<br>Դասագիրքը սկսվում է երկրորդ դասարանում անցած նյութի կրկնությունից, այն ներառում է բոլոր թեմաները, որոնք նպաստում են առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների, հմտությունների, արժեքային համակարգի ձևավորմանը: Նյութի ծավալը համապատասխանում է ուսումնական գործունեությանը հատկացված ժամաքանակին: Խնդիրներն ու վարժությունները ներկայացված են պարզից բարդ սկզբունքով, նյութերն ու առաջադրանքները հնարավորություն են ընձեռում կազմակերպելու ինչպես անհատական, այնպես էլ | հատ՝ | 15177 | 800 | 12141600 | Մինչև ս/թ օգոստոսի 20-ը |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | խմբային աշխատանքներ: Բովանդակության բարդության աստիճանը համապատասխանում է սովորողների տարիքային առանձնահատկություններին, յուրացման հնարավորություններին, շարադրանքը մատչելի է, ապահովված են տեսական և գործնական նյութերի համամասնությունը, նաև՝ միջառարկայական կապերը «Մայրենի», «Ես և շրջակա աշխարհը» առարկաների հետ: Առկա են ուսումնական տարբեր կարողությունների տեր սովորողների համար նախատեսված առաջադրանքներ, ամփոփիչ հարցեր, տարբեր բարդության տրամաբանական խնդիրներ: Առկա է բովանդակության ցանկ: Պատկերազարդումները նպատակային են, համադրված են տեքստին: Պատկերազարդումները ներառում են սովորողի կյանքին ու միջավայրին վերաբերող նյութեր՝ սպորտ, առօրյա կյանք՝ դպրոց, ծնողներ, եղբայրներ և քույրեր, խաղեր ընկերների հետ, տնային տնտեսություն այդ թվում՝ գյուղական վայրերում, ինչը, անշուշտ, սովորողների համար ավելի գրավիչ է դարձնում առարկայի ուսումնառությունը:<br>**Տեխնիկական չափանիշներ**<br>Էջերի քանակը՝ 96<br>Չափսը՝ 17X24 սմ<br>Գույնը՝ 4X4<br>Թուղթը՝ օֆսեթ 70 գ/մ2<br>Կազմը՝ ֆութբորդ 270 գ/մ2<br>Կարելու ձևը՝ թելակար<br>Սոսնձելու ձևը՝ թերմոսոսինձ | | | | | |
| 6 | 22111110-58 | Դասագիրք-6 | Գնման առարկա է հանդիսանում<br>**«Մաթեմատիկա 3» դասագիրքը, II մաս, 3-րդ դասարանի դասագիրք, հեղ.՝ Ս. Մկրտչյան**<br>**Բովանդակային չափանիշներ**<br>Դասագիրքը պարունակում է թեմաներ, որոնք, ըստ առարկայական ծրագրի, նպաստում են առարկայի չափորոշչով սահմանված՝ սովորողի կարողությունների և հմտությունների, արժեքային համակարգի ձևավորմանը: Նյութի ծավալը համապատասխանում է ուսումնական ծրագրով սահմանված ժամաքանակին: Խնդիրներն ու վարժությունները ներկայացված են պարզից բարդ սկզբունքով, նյութերն ու առաջադրանքները հնարավորություն են ընձեռում կազմակերպելու ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքներ: Դասագիրքն ավարտվում է ուստարվա անցած թեմաների կրկնությամբ: Բովանդակության բարդությունը համապատասխանում է սովորողների յուրացման հնարավորություններին, շարադրանքը մատչելի է, ապահովված են տեսական և գործնական նյութերի համամասնությունը, միջառարկայական կապերը «Մայրենի», «Ես և շրջակա աշխարհը», «Շախմատ» առարկաների հետ: Առկա են ուսումնական տարբեր կարողությունների տեր սովորողների համար նախատեսված առաջադրանքներ, ամփոփիչ հարցեր: Բովանդակությունը տրոհված է թեմաների, առկա է բովանդակության ցանկ: Պատկերազարդումները՝ նկարները, գծանկարները, նպատակային են, համադրված են տեքստին:<br>Առաջադրանքներն ու պատկերազարդումները ներառում են սովորողի կյանքին ու միջավայրին վերաբերող նյութեր՝ սպորտ, առօրյա կյանք՝ դպրոց, խաղեր ընկերների հետ:<br>**Տեխնիկական չափանիշներ**<br>Էջերի քանակը՝ 104<br>Չափսը՝ 17X24սմ | հատ | 15177 | 850 | 12900450 | Մինչև ս/թ օգոստոսի 20-ը |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Գույնը՝ 4X4<br>Թուղթը՝ օֆսեթ 70 գ/մ²<br>Կազմը՝ ֆութբորդ 270 գ/մ²<br>Կարելու ձևը՝ թելակար<br>Սոսնձելու ձևը՝ թերմոսոսինձ | | | | | |
| 7 | 22111110-66 | Դասագիրք-7 | Գնման առարկա է հանդիսանում<br>Կերպարվեստ 3» դասագիրքը, 3-րդ դասարանի դասագիրք, հեղ.՝ Լ. Ներսիսյան, Ս. Ներսիսյան<br>Բովանդակային չափանիշներ<br>Դասագիրք նախատեսված է հանրակրթական դպրոցի երրորդ դասարանի համար: Համապատասխանում է «Կերպարվեստ» առարկայի առարկայական չափորոշչին ու ծրագրին և ընդգրկում է երրորդ դասարանի համար նախատեսված ծրագրային նյութը: Շարունակությունն է երկրորդ դասարանի «Կերպարվեստ» դասագրքի և հիմք է նախապատրաստում չորրորդ դասարանների «Կերպարվեստ» առարկայի լիարժեք ուսուցման համար:<br>Տեխնիկական չափանիշներ<br>Էջերի քանակը՝ 64<br>Չափսը՝ 17X24 սմ<br>Գույնը՝ 4X4<br>Թուղթը՝ օֆսեթ 70 գ/մ²<br>Կազմը՝ ֆուտբորդ 270 գ/մ²<br>Կարելու ձևը՝ թելակար<br>Սոսնձելու ձևը՝ թերմոսոսինձ | հատ | 25291 | 1350 | 34142850 | Մինչև ս/թ օգոստոսի 20-ը |
| 8 | 22111110-80 | Դասագիրք-8 | Գնման առարկա է հանդիսանում<br>«Մաթեմատիկա 4» դասագիրքը, I մաս, 4-րդ դասարանի դասագիրք, հեղ.՝ Ս. Մկրտչյան<br>Բովանդակային չափանիշներ<br>Դասագիրքy սկսվում է երրորդ դասարանում անցած նյութի կրկնությունից, այն ներառում է բոլոր թեմաները, որոնք նպաստում են առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների, հմտությունների, արժեքային համակարգի ձևավորմանը: Նյութի ծավալը համապատասխանում է որոնունեությանը հատկացված ժամաքանակին: Խնդիրներն ու վարժությունները ներկայացված են պարզից բարդ սկզբունքով, նյութերն ու առաջադրանքները հնարավորություն են ընձեռում կազմակերպելու ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքներ: Բովանդակության բարդության աստիճանը համապատասխանում է սովորողների տարիքային առանձնահատկություններին, յուրացման հնարավորություններին, շարադրանքը մատչելի է, ապահովված են տեսական և գործնական նյութերի համամասնությունը, նաև՝ միջառարկայական կապերը: Առկա են ուսումնական տարբեր կարողությունների տեր սովորողների համար նախատեսված առաջադրանքներ, ամփոփիչ հարցեր, տարբեր բարդության տրամաբանական խնդիրներ: Առկա է բովանդակության ցանկ: Պատկերազարդումները նպատակային են, համադրված են տեքստին: Պատկերազարդումները ներառում են սովորողի<br>կյանքին ու միջավայրին վերաբերող նյութեր՝ սպորտ, առօրյա կյանք:<br>Տեխնիկական չափանիշներ<br>Էջերի քանակը՝ 96<br>Չափսը՝ 17X24 սմ<br>Գույնը՝ 4X4<br>Թուղթը՝ օֆսեթ 70 գ/մ²<br>Կազմը՝ ֆութբորդ 270 գ/մ² | հատ | 19741 | 860 | 16977260 | Մինչև ս/թ օգոստոսի 20-ը |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Կարելու ձևը՝ թելակար<br>Սոսնձելու ձևը՝ թերմոսոսինձ | | | | | |
| 9 | 22111110-81 | Դասագիրք-9 | Գնման առարկա է հանդիսանում<br>«Մաթեմատիկա 4» դասագիրքը, II մաս, 4-րդ դասարանի դասագիրք, հեղ.՝ Ս. Մկրտչյան<br>Բովանդակային չափանիշներ<br>Դասագիրքը պարունակում է թեմաներ, որոնք, ըստ առարկայական ծրագրի, նպաստում են առարկայի չափորոշչով սահմանված՝ սովորողի կարողությունների և հմտությունների, արժեքային համակարգի ձևավորմանը: Նյութի ծավալը համապատասխանում է ուսումնական ծրագրով սահմանված ժամաքանակին: Խնդիրներն ու վարժությունները ներկայացված են պարզից բարդ սկզբունքով, նյութերն ու առաջադրանքները հնարավորություն են ընձեռում կազմակերպելու ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքներ: Դասագիրքն ավարտվում է ուստարվա անցած թեմաների կրկնությամբ: Բովանդակության բարդությունը համապատասխանում է սովորողների յուրացման հնարավորություններին, շարադրանքը մատչելի է, ապահովված են տեսական և գործնական նյութերի համամասնությունը, միջառարկայական կապերը «Մայրենի», «Ես և շրջակա աշխարհը», «Շախմատ» առարկաների հետ: Առկա են ուսումնական տարբեր կարողությունների տերսովորողների համար նախատեսված առաջադրանքներ, ամփոփիչ հարցեր: Բովանդակությունը տրոհված է թեմաների, դասերի առկա է բովանդակության ցանկ: Պատկերազարդումները՝ նկարները, գծանկարները, նպատակային են, համադրված են տեքստին: Առաջադրանքներն ու պատկերազարդումները ներառում են սովորողի կյանքին ու միջավայրին վերաբերող նյութեր՝ սպորտ, առօրյա կյանք՝ դպրոց, խաղեր ընկերների հետ:<br>Տեխնիկական չափանիշներ<br>Էջերի քանակը՝ 88<br>Չափսը՝ 17X24սմ<br>Գույնը՝ 4X4<br>Թուղթը՝ օֆսեթ 70 գ/մ²<br>Կազմը՝ ֆութբորդ 270 գ/մ²<br>Կարելու ձևը՝ թելակար<br>Սոսնձելու ձևը՝ թերմոսոսինձ | հատ | 19741 | 790 | 15595390 | Մինչև ս/թ օգոստոսի 20-ը |
| 10 | 22111110-109 | Դասագիրք-10 | Գնման առարկա է հանդիսանում<br>«Կերպարվեստ 4» դասագիրքը, 4-րդ դասարանի դասագիրք հեղ.՝ Լ. Ներսիսյան, Ս. Ներսիսյան<br>Բովանդակային չափանիշներ<br>Դասագիրքը նախատեսված է հանրակրթական դպրոցի չորրորդ դասարանի համար: Համապատասխանում է «Կերպարվեստ» առարկայի առարկայական չափորոշչին ու ծրագրին և ընդգրկում է չորրորդ դասարանի համար նախատեսված ծրագրային նյութը: Շարունակությունն է երրորդ դասարանի «Կերպարվեստ» դասագրքի և հիմք է նախապատրաստում հինգերորդ դասարանի «Կերպարվեստ» առարկայի լիարժեք ուսուցման համար:<br>Տեխնիկական չափանիշներ<br>Էջերի քանակը՝ 80<br>Չափսը՝ 17X24 սմ<br>Գույնը՝ 4X4<br>Թուղթը՝ օֆսեթ 70 գ/մ²<br>Կազմը՝ ֆուտբորդ 270 գ/մ²<br>Կարելու ձևը՝ թելակար | հատ | 26130 | 1500 | 39195000 | Մինչև ս/թ օգոստոսի 20-ը |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Սոսնձելու ձևը՝ թերմոսոսինձ | | | | | |

## 1-10 - րդ չափաբաժինների համար

Ելքային տեղեկություններ՝ Հայպետստանդարտի կոլեգիայի 1996թ. հոկտեմբերի 25-ի թիվ 8 որոշմամբ հաստատված «Հրատարակություն, ելքային տեղեկություններ» ԳՈՍՏ 7.4-95 միջպետական ստանդարտին համապատասխան:

Հատուկ նշագրում՝ դասագրքերի տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝ <<Վաճառքի ենթակա չէ>> բառերը: Դասագրքերի մատակարարումն իրականացվում է Կատարողի կողմից՝ համաձայն կից բաշխման ցուցակի: Դասագրքերը պետք է լինեն նոր՝ չօգտագործված:

ԳՆՈՐԴ

------------------------ Վ. Գասպարյան

ԿԱՏԱՐՈՂ

------------------------ Ա. Մկրտչյան

# ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ /ընդհանուր/

| Հաժարաժին | Անվանումը | Երևանիքաղաքապետարանի հանարկարթության վարչություն | Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն | Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն | Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն | Արագածոտնի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչութ | Կոտայքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչութ | Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչութ | Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչու | Արարատի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչութ | Վայոց_Ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչ. | Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն | ԿԳՄՍՆ ենթակայության հանրակրթական ուսումնական հաստ. | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| 1 | Դասագիրք «Մաթեմատիկա 1, Iմ.» /դասագիրք-տետր/ | 12038 | 1640 | 2980 | 2600 | 1884 | 3902 | 2771 | 3888 | 3700 | 685 | 1780 | 614 | 38482 |
| 2 | Դասագիրք «Մաթեմատիկա 1», 2-րդ մաս | 8982 | 690 | 2465 | 1720 | 825 | 2326 | 1610 | 2773 | 1458 | 502 | 1158 | 379 | 24888 |
| 3 | Դասագիրք «Կերպարվեստ 1» /աշխատանք. տետր/ | 12528 | 1631 | 3305 | 3100 | 2003 | 3920 | 2908 | 3888 | 3926 | 685 | 1685 | 613 | 40192 |
| 4 | Դասագիրք «Երաժշտություն 2» | 11201 | 1540 | 545 | 3150 | 1737 | 3884 | 2669 | 3744 | 3745 | 614 | 1045 | 379 | 34253 |
| 5 | Դասագիրք «Մաթեմատիկա 3», I մաս | 3087 | 610 | 1034 | 1300 | 1216 | 1821 | 1493 | 1627 | 1370 | 351 | 1052 | 216 | 15177 |
| 6 | Դասագիրք «Մաթեմատիկա 3», II մաս | 3087 | 610 | 1034 | 1300 | 1216 | 1821 | 1493 | 1627 | 1370 | 351 | 1052 | 216 | 15177 |
| 7 | Դասագիրք «Կերպարվեստ 3» | 7648 | 1106 | 356 | 2540 | 904 | 2528 | 1961 | 2709 | 3390 | 545 | 1183 | 421 | 25291 |
| 8 | Դասագիրք «Մաթեմատիկա 4», I մաս | 6145 | 667 | 1006 | 1770 | 705 | 2223 | 1303 | 2605 | 1497 | 349 | 1058 | 413 | 19741 |
| 9 | Դասագիրք «Մաթեմատիկա 4», II մաս | 6145 | 667 | 1006 | 1770 | 705 | 2223 | 1303 | 2605 | 1497 | 349 | 1058 | 413 | 19741 |
| 10 | Դասագիրք «Կերպարվեստ 4» | 8376 | 1104 | 339 | 2580 | 987 | 2897 | 1745 | 2829 | 3204 | 390 | 1184 | 495 | 26130 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 79237 | 10265 | 14070 | 21830 | 12182 | 27545 | 19256 | 28295 | 25157 | 4821 | 12255 | 4159 | 259 072 |

Ծանոթություն * ՀՀ ԿԳՄՍՆ ենթակա ուսումնական հաստատությունների դասագրքերը հանձնվում են Երևանի թիվ 112 ավագ դպրոց:

ԳՆՈՐԴ

---------------- Վ. Գասպարյան

ՎԱՃԱՌՈՂ

---------------- Մ. Մկրտչյան

*Հավելված N 2*
*« 07 » 05 2021թ. կնքված*
*ՀՀԿԳՄՄՆՄԱՄՊՁԲ-21/26 ծածկագրով պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Չափա-բաժնի համարը | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ.-ին, ըստ ամիսների, այդ թվում. | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | Դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 22111110-106 | Դասագիրք «Մաթեմատիկա 1, Ամաս» /դասագիրք-տետր/ | | | | | | | 52335520 | 52335520 | 52335520 | 52335520 | 52335520 | 52335520 | 52335520 |
| 2 | 22111110-43 | Դասագիրք «Մաթեմատիկա 1», 2-րդ մաս | | | | | | | 31483320 | 31483320 | 31483320 | 31483320 | 31483320 | 31483320 | 31483320 |
| 3 | 22111110-44 | Դասագիրք «Կերպարվեստ 1» /աշխատանք. տետր/ | | | | | | | 32957440 | 32957440 | 32957440 | 32957440 | 32957440 | 32957440 | 32957440 |
| 4 | 22111110-48 | Դասագիրք «Երաժշտություն 2» | | | | | | | 49666850 | 49666850 | 49666850 | 49666850 | 49666850 | 49666850 | 49666850 |
| 5 | 22111110-57 | Դասագիրք «Մաթեմատիկա 3», I մաս | | | | | | | 12141600 | 12141600 | 12141600 | 12141600 | 12141600 | 12141600 | 12141600 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 6 | 22111110-58 | Դասագիրք «Մաթեմատիկա 3», II մաս | | | | | | | 12900450 | 12900450 | 12900450 | 12900450 | 12900450 | 12900450 | 12900450 |
| 7 | 22111110-66 | Դասագիրք «Կերպարվեստ 3» | | | | | | | 34142850 | 34142850 | 34142850 | 34142850 | 34142850 | 34142850 | 34142850 |
| 8 | 22111110-80 | Դասագիրք «Մաթեմատիկա 4», I մաս | | | | | | | 16977260 | 16977260 | 16977260 | 16977260 | 16977260 | 16977260 | 16977260 |
| 9 | 22111110-81 | Դասագիրք «Մաթեմատիկա 4», II մաս | | | | | | | 15595390 | 15595390 | 15595390 | 15595390 | 15595390 | 15595390 | 15595390 |
| 10 | 22111110-109 | Դասագիրք «Կերպարվեստ 4» | | | | | | | 39195000 | 39195000 | 39195000 | 39195000 | 39195000 | 39195000 | 39195000 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ

-------------------- Վ. Գասպարյան

ԿԱՏԱՐՈՂ

-------------------- [illegible]յան